EMBASSY OF THE REPUBLIC OF ARMENIA
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
PRESS RELEASE

Կանադայում ՀՀ դեսպանությունը տեղեկացնում է, որ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը կազմակերպում է համահայկական մանկապատանեկան նկարչական 5-րդ մրցույթ-փառատոնը՝ «Մեկ դար և ավելի...» խորագրով:

Մրցույթին կարող են մասնակցել կերպարվեստով հետաքրքրված 6-18 տարեկան երեխաներն ու պատանիները:

Մրցույթ փառատոնի հայտարարությունն ու նկարագիրը կցված են:

Դիմումները ներկայացնելու վերջնաժամկետն է հունիսի 8-ը:

7 Delaware Avenue, Ottawa, Ontario K2P 0Z2
Telephone: 613 234-3710 Fax: 613 234-3444

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը Գեղագիտության ազգային կենտրոնի հետ համատեղ 2014 թվականին կազմակերպում է համահայկական մանկապատանեկան նկարչական 5-րդ հոբելյանական մրցույթ-փառատոնը՝ ***«Մեկ դար և ավելի...»*** խորագրով:

5-րդ մրցույթ-փառատոնը կազմակերպվում է Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ: 20-րդ դարասկզբի այս իրադարձությունը անջնջելի հետք է թողել հայ ժողովրդի հետագա ճակատագրի վրա: Ի հակառակ կատարվածի՝ ամբողջ անցած դարը արտացոլում է ժողովրդի վերապրելու, կայանալու, զարգանալու պատմությունը թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում: Ժողովուրդը երկնել է, ստեղծագործել, պայքարել և ունեցել զարմանահրաշ թռիչքներ քաղաքականության, արվեստի, սպորտի, գիտության մեջ:

Մասնակիցներից ակնկալվում է իմաստավորել անցած մեկդարյա ուղին և պատկերել իրենց սպասումները ապագայից: Հնարավոր է անդրադարձ Հայոց ցեղասպանության թեման արտացոլած գրողներին, պոետներին և նրանց ստեղծագործություններին, գաղութների, մշակույթի և քաղաքական, մասնավորապես Հայ Դատի պատմությանը, ինչպես նաև ապագայի մասին պատկերացումներին:

Խրախուսելի չեն ցեղասպանության դաժանության, ողբի կամ միայն կորուստների պատկերները:

Մրցույթ-փառատոնին կարող են մասնակցել կերպարվեստով հետաքրքրված 6-18 տարեկան շնորհալի երեխաները և պատանի ստեղծագործողները հայալեզու վարժարաններից և կրթօջախներից (այդ թվում՝ մեկօրյա), մշակութային կենտրոններից, ինչպես նաև անհատներ (միայն նախագծային աշխատանքով): Հաշվի առնելով թեմայի կարևորությունը և համախմբող բնույթը՝ մրցույթին պետք է ներկայացվեն միայն նախագծային աշխատանքներ (մեկ թեմայի կամ առաջարկության շուրջ մտածված խմբային աշխատանք), որոնք նպաստում են կոլեկտիվում միասնական, թիմային աշխատանքի մտածողության զարգացմանը:

Նախագիծը ենթադրում է գաղափարին համապատասխանող աշխատանքների մի շարք, որի կատարման հիմքում ընկած կլինի երեխաների անսահման երևակայությունը և ուսուցչի կողմից թեմայի խոր ըմբռնումը:

Աշխատանքները կարող են ներառել կերպարվեստի ցանկացած տեսակ (գեղանկարչություն, գրաֆիկա, խեցեգործություն, կարպետագործություն, տեքստիլ, մետաղի և փայտի գեղարվեստական մշակում և այլն), ցանկացած նկարչական նյութ(ջրաներկ, գուաշ, ակրիլ, յուղաներկ, ածուխ, պաստել և այլն):

Նախագիծը նկարներով իրականացնելու դեպքում ընդգրկված աշխատանքները պետք է լինեն միևնույն չափի, ցանկալի է մինչև 10 կտորից:

Մասնակիցները պետք է դիմեն nkarchakan@gmail.com էլեկտրոնային հասցեով մինչև ս./թ. հունիսի 8-ը ներառյալ:

Մրցույթ-փառատոնի առաջին փուլում հաղթողների աշխատանքները կներկայացվեն Գեղագիտության ազգային կենտրոնի Մանկական պատկերասրահում կազմակերպվող ցուցահանդեսում՝ հոկտեմբերի առաջին տասնօրյակից մինչև նոյեմբերի առաջին տասնօրյակը: Ցուցահանդեսին մասնակցած բոլոր աշխատանքները կտպագրվեն պատկերագրքում:

060-620876

Մասնագիտական հանձնաժողովի եզրակացության, ինչպես նաև հանդիսատեսի առցանց քվեարկության արդյունքներով հոկտեմբերի առաջին տասնօրյակում կհայտարարվեն երկրորդ փուլի հաղթողները: Մրցույթ-փառատոնի առաջին փուլի բոլոր հաղթողները կստանան ցուցահանդեսի պատկերագիրք, երկրորդ փուլի հաղթողները՝ նաև հիմնական և խրախուսական մրցանակներ:

Համահայկական մանկապատանեկան նկարչական 5-րդ մրցույթ-փառատոնի շրջանակում նախատեսվում են նաև լրացուցիչ միջոցառումներ, որոնց ցանկը և ժամանակացույցը կներկայացվի ընթացքում:

Մրցույթ-փառատոնին մասնակցող դպրոցների **մանկավարժների համար** Գեղագիտության ազգային կենտրոնի պաշտոնական www.nca.am կայքում, Youtube-ում և ՀՀ կրթության և գիտության նախարարության էլեկտրոնային գրադարանի www.spyurq.dasagirq.am կայքում ապրիլ ամսին կտեղադրվի մեթոդական խորհրդատվության տեսագրություն:

Հաշվի առնելով այն, որ այս տարի մրցույթ-փառատոնը տոնում է իր 5-ամյակը՝ դիմում ենք մեր բոլոր գործընկերներին իրենց գնահատականները և մաղթանքները ուղարկելու խնդրանքով: Նրանցից մի քանիսը կտեղադրվեն պատկերագրքում:

Սույն հայտարարությանը կցվում է մրցույթ-փառատոնի նկարագրությունը:

Հավելյալ հարցերով կարելի է դիմել.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն.
հեռ. +374 10 58-13-91
ֆաքս. +374 10 52-73-43
Էլ.փոստ. spyurq@yahoo.com
Կայքէջ. www.edu.am, www.armedu.am
Էջ Facebook-ում. «Սփյուռքի բաժին ՀՀ կրթգիտնախ»

Գեղագիտության ազգային կենտրոն.
հեռ. +374 10 58-75-60
Էլ.փոստ. nkarchakan@gmail.com
Կայքէջ. www.nca.am
Էջ Facebook-ում. «National Center of Aesthetics»

ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Գեղագիտության ազգային կենտրոն

ՄԵԿ ԴԱՐ ԵՎ ԱՎԵԼԻ...

Համահայկական մանկապատանեկան նկարչական 5-րդ հոբելյանական մրցույթ-փառատոն

5-րդ մրցույթ-փառատոնը կազմակերպվում է Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ: 20-րդ դարասկզբի այս իրադարձությունը անջնջելի հետք է թողել հայ ժողովրդի հետագա ճակատագրի վրա: Ի հակառակ կատարվածի՝ ամբողջ անցած դարը արտացոլում է ժողովրդի վերապրելու, կայանալու, զարգանալու պատմությունը թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում: Ժողովուրդը երկնել է, ստեղծագործել, պայքարել և ունեցել զարմանահրաշ թռիչքներ քաղաքականության, արվեստի, սպորտի, գիտության մեջ:

Մասնակիցներից ակնկալվում է իմաստավորել անցած մեկդարյա ուղին և պատկերել իրենց սպասումները ապագայից: Հնարավոր է անդրադարձ Հայոց ցեղասպանության թեման արտացոլած գրողներին, պոետներին և նրանց ստեղծագործություններին, գաղութների, մշակույթի և քաղաքական, մասնավորապես Հայ Դատի, պատմությանը, ինչպես նաև ապագայի մասին պատկերացումներին:

Խրախուսելի չեն ցեղասպանության դաժանության, ողբի կամ միայն կորուստների պատկերները:

Հաշվի առնելով թեմայի կարևորությունը և համախմբող բնույթը՝ **մրցույթին պետք է ներկայացվեն միայն նախագծային աշխատանքներ** (մեկ թեմայի կամ առաջարկության շուրջ մտածված խմբային աշխատանք), որոնք նպաստում են մեկ կոլեկտիվում միասնական, թիմային աշխատանքի մտածողության զարգացմանը:

Մրցույթ-փառատոնի մասնակիցները.

Մրցույթ-փառատոնին կարող են մասնակցել երկու տարիքային խմբեր.

- 6-13
- 14-18:

Մրցույթ-փառատոնի անցկացման կարգը.

Մրցույթը նախատեսված է անցկացնել երկու փուլով:

<u>Առաջին փուլում</u> աշխատանքները մասնակիցների կողմից ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ մինչև ս.թ. հունիսի 8-ը: Մասնագիտական հանձնաժողովի կողմից ընտրվում են լավագույն աշխատանքները՝ ցուցահանդեսը կազմակերպելու և աշխատանքները տպագրելու նպատակով:

<u>Երկրորդ փուլում</u> մասնակիցները ներկայացնում են իրենց աշխատանքների բնօրինակները՝ ցուցահանդեսի համար: Այս փուլում ցուցահանդեսին ներկայացված նկարների հեղինակներից կընտրվեն հիմնական և խրախուսական մրցանակակիրները (այդ թվում՝ առցանց քվեարկության արդյունքում կայք այցելողների համակրանքին արժանացած 1 մրցանակ):

Ստեղծագործությունների գնահատման հիմքեր.

Նախագիծը ենթադրում է գաղափարին համապատասխանող աշխատանքների մի շարք, որի կատարման հիմքում ընկած կլինի երեխաների անսահման երևակայությունը և ուսուցչի կողմից թեմայի խոր ըմբռնումը:

Աշխատանքները կարող են ներառել կերպարվեստի ցանկացած տեսակ (գեղանկարչություն, գրաֆիկա, խեցեգործություն, կարպետագործություն, տեքստիլ, մետաղի և փայտի գեղարվեստական մշակում և այլն), ցանկացած նկարչական նյութ(ջրաներկ, գուաշ, ակրիլ, յուղաներկ, ածուխ, պաստել և այլն):

Նախագիծը նկարներով իրականացնելու դեպքում ընգրկված աշխատանքները պետք է լինեն միևնույն չափի, ցանկալի է՝ մինչև 10 կտորից:

Աշխատանքների ընտրության ընթացքում հաշվի են առնվելու.

- նախագծի գաղափարի յուրօրինակությունը,
- գեղարվեստական կատարումը,
- նախագծի հետազոտական հիմքը.

Մեթոդական աջակցությունը.

Մրցույթ-փառատոնին մասնակցող դպրոցների մանկավարժների համար Գեղագիտության ազգային կենտրոնի պաշտոնական www.nca.am կայքում, Youtube-ում և ՀՀ կրթության և գիտության նախարարության էլեկտրոնային գրադարանի www.spyurq.dasagirq.am կայքում ապրիլ ամսին կտեղադրվի մեթոդական խորհրդատրության տեսագրություն:

Ակնկալում ենք նաև, որ մանկավարժները նախապատրաստական փուլում կապի մեջ կմտնեն Գեղագիտության ազգային կենտրոնի աշխատանքային խմբի հետ:

Ստեղծագործությունների ներկայացման պայմանները.

Առաջին փուլում աշխատանքները ներկայացվում են PDF կամ JPG ձևաչափով ՀՀ կրթության և գիտության նախարարության և Գեղագիտության ազգային կենտրոնի կողմից համատեղ սպասարկվող **nkarchakan@gmail.com** էլեկտրոնային հասցեով մինչև 2014թ. հունիսի 8-ը ներառյալ: Պատկերների մեծ քանակի և ծավալի դեպքում ցանկալի է դրանք ուղարկել ոչ թե կցելով նամակին, այլ տեղադրելով որևէ առցանց պատկերաշարում (օրինակ՝ Picassa, 4shared.com և այլ):

Առաջին փուլում պատկերը ուղարկելիս անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները.

1. PDF կամ JPG ֆայլերը ունենան նկարի հեղինակի ազգանունը և անունը՝ որպես ֆայլի անվանում,
2. էլեկտրոնային նամակում նշված լինի ստեղծագործության անվանումը, չափը և տեխնիկան, հեղինակի անունը և ազգանունը, տարիքը, կրթական հաստատությունը (այն դեպքում, եթե նկարը ներկայացվում է ոչ թե անհատի, այլ որևէ կրթօջախի կողմից), բնակության երկիրը, քաղաքը և կապի միջոց՝ էլ. հասցե, հեռախոսահամար, հասցե:
3. կերպարվեստ դասավանդող մանկավարժի անունը, ազգանունը:

Ուշադրություն, առաջին փուլի համար հայտերը պետք է ներկայացնել միայն էլեկտրոնային տարբերակով՝ ուղարկելով դրանք nkarchakan@gmail.com էլ. հասցեին:

Նույն տեղեկություններ պետք է լինեն նաև փակցված **ստեղծագործության վրա՝** բնօրինակը երկրորդ փուլին ներկայացնելու ժամանակ:

Երկրորդ փուլի համար առաջին փուլում հաղթած աշխատանքների բնօրինակները մինչև սեպտեմբերի 14-ը փոստով կամ առձեռն պետք է փոխանցվեն Գեղագիտության ազգային կենտրոն.

National Centre of Aesthetics, Studio-college, Moskovyan 37, Yerevan, 0001, Armenia

0001, Երևան, Մոսկովյան 37, Գեղագիտության ազգային կենտրոնի ստուդիա-քոլեջ

Ծրարի վրա պետք է լինի HAMAHAYKAKAN NKARCHAKAN MRTSUYT նշումը:

Պարգևները.

Մրցույթ-փառատոնի առաջին փուլի բոլոր հաղթողները կստանան ցուցահանդեսի պատկերագիրք:

Երկրորդ փուլում հաղթողները կստանան նաև մրցանակներ:

Մրցույթ-փառատոնի ժամանակացույցը.

N	Գործողություն/աշխատանք	Ժամկետ
1.	Մանկավարժների համար մեթոդական սեմինարի անցկացում և տեղադրում կայքում, մեթոդական նյութերի տրամադրում	ապրիլ
2.	Առաջին փուլում աշխատանքների ներկայացման վերջնաժամկետ	հունիսի 8-ը
3.	Առաջին փուլի արդյունքների ամփոփում	մինչև հուլիսի 6-ը
4.	Երկրորդ փուլի աշխատանքների բնօրինակների ներկայացման վերջնաժամկետ	սեպտեմբերի 14-ը
5.	Ցուցահանդեսի բացում	հոկտեմբերի երկրորդ տասնօրյակ
6.	Ցուցահանդեսի փակում և հաղթողների հայտարարում	նոյեմբերի երկրորդ տասնօրյակ
7.	Հաղթողների հայտարարում, պատկերագրքի շնորհանդես և փակման արարողություն	դեկտեմբեր